•

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ. 2 հիմնական

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում:

Վերապատրաստող, մենթոր՝ Ա. Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Լ. Եդիգարյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն---------- էջ 3

2. Գրական ակնարկ---------- էջ 6

3.Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում---------- էջ 7

4. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդիրները տարրական դասարաններում----------էջ 12

5. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում ----------էջ 15

6. Սեփական փորձառության ներկայացում----------էջ18

7. Դասի օրվա պլան ----------էջ 20

7. Եզրակացություն ----------էջ 23

8. Գրականության ցանկ----------էջ 25

Ներածություն

Չի կարելի մարդու հոգևոր աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ՝ իր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով [1] :

Սուխոմլինսկի

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Ներկա ժամանակում աշխարհը փոխվում է գլխապտույտ արագությամբ: Փոփոխությունների են ենթարկվում ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ տնտեսական արժեքները: Սակայն այդ ամենին հավասար և հասարակական բոլոր կառույցներին զուգահեռ սասանվում են նաև դպրոցն ու կրթական համակարգը,քանզի հենց այս կառույցներն են կրում հասարակության բոլոր ելևէջների կնիքը:Ձևավորվում են տարամակարդակ ընտանիքներ: Երեխաները տարբեր ընտանիքներում տարբեր ձևերով ու մեթոդներով են դաստիարկավում, քանի որ սոցիալական պայմանների արդի բևեռացումը անպայման առաջացնում է վարքագծային և հոգեբանական խիստ տարբեր մոտեցումներ: Արդյունքում ստացվում է մի բազմաշերտ մշակույթ, որն իր խարիսխը գտնում է դպրոցում' դաստիարակության նորագույն նախագծերի և մեթոդների ստեղծման անհրաժեշտություն թելադրելով այսօրվա ուսուցչին: Փոփոխությունների այդ շղթան ստիպում է վերանայել հին արժեքները, կատարելագործել դրանք, հարկ եղած դեպքում' ստեղծել նորերը: Առաջնային է դառնում նաև դաստիարակության մեթոդական զինանոցի թարմացումը, քանի որ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը և ժամանակակից մոտեցումներով կազմակերպումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե երեխայի մեջ ինչպիսի զգացական վերաբերմունք է առաջացնում ուսուցիչը ուսումնական գործընթացում և այդ գործընթացում սովորողի արժեհամակարգի ձևավորման նպատակով

1. Письмо о педагогической этике. "Народное образование", 1970, № 11

ինչպիսի մեթոդներ է կիրառում [2]:

Այս առումով անհերքելի է մայրենիի ուսումնասիրման գործընթացում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների բանահյուսական պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը:Վերջիններս օժտված են կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը,աշխարհընկալումը,մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին:Այսպես նա պիտի հասնի այն գիտակցության,որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, հանդուրժողականությամբ, մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ,այլև՝ պահպանմամբ:Սերունդ,որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները,աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

Դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուսումնասիրություն:

Հետազոտության խնդիրներն են՝

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը.

2.պարզել՝ ինչ ասել է «արժեքային համակարգ»,դրա բովանդակությունը մայրենիի դասավանդման համատեքստում.

3.բացահայտել արժեքային համակարգի,հանդուրժողականության ձևավորման ուղիներն ու միջոցները:

---

2. Նախաշավիղ 5.2014, էջ 60

Հետազոտության վարկածը՝

Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորումն ավելի արդյունավետ կլինի, եթե մշակվի և հանրակրթության բնագավառում ներդրվի դպրոցականների ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման մոդելը՝ հաշվի առնելով ազգային և համամարդկային արժեհամակարգերի միաժամանակյա ուսուցման անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Աճող սերնդի արժեքային համակարգի ձևավորման մասին գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը,Անանիա Շիրակացին,իսկ Խաչատուր Աբովյանը ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց: Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը: Միքայել Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է. «Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,ձևավորի արժեքային համակարգ»: Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության առանցքային խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,որի համար կարևոր էր համարում մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակությունը: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ, ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է մայրենիի դերը՝ սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորելու գործում:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության

ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն

սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[3] :

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[4] :

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն

---

3. Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:

4. Տես՝ նույն տեղում, 64 էջ:

վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Հետևաբար՝ աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» [5]:

---

5. Տես՝ Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդիրները տարրական դասարաններում

Ինչպե՞ս, ի՞նչ մեթոդներով և հնարներով պետք է այսօրվա դպրոցն իրականացնի իր առաքելությունը. չէ՞ որ փոխվել են՝ աշխարհը, հասարակությունը և մարդը: Այս փոփոխություններից անմասն չի մնացել նաև ժամանակակից երեխան՝ իր վառ անհատականությամբ և առանձնահատկություններով: Արդյո՞ք արժե բացարձակապես մերժել նախկին կրթահամակարգը և զինվել ու առաջնորդվել ժամանակակից կրթական բարեփոխումների շրջանակներում ամրագրված մեթոդներով, պահանջներով:

«Դաստիարակությունն առաջնություն ունի կրթության նկատմամբ: Մարդուն ստեղծում է դաստիարակությունը»,- ասել է Սենտ- էքզյուպերին:

Հավանություն տալով մեծ մտածողի մտքին և կիսելով նրա կարծիքը՝ ուզում ենք նշել, որ բոլորիս խնդիրն է՝ նախ դաստիարակել, ապա կրթել երեխային: Իսկ երեխայի դաստիարակությունը երբեք դյուրին գործ չէ: Այսօր այն առավել դժվար է: Դաստիարակությունը համբերության անհրաժեշտություն է, հավատի պարտադրանք, զոհողության ու սիրո ցույց:

Եթե դասապրոցեսում գիտելիքների ձեռքբերումը եռամակարդակ է, ապա դաստիարակության հարցում պատկերն այլ է: Անձնային լավ որակներ կարող են բոլորն ունենալ՝ անկախ ուսման առաջադիմությունից և գիտելիքների կարողությունների և հմտությունների ձեռքբերման աստիճանից:

Անգամ թույլ կարողություններով օժտված երեխան պիտի զգա, որ ինքը կարևոր դեր ունի դասարանում: Անտեսված, չկարևորված աշակերտը մեծանում է արժևորվելու մշտական կարիքով: ժողովրդական խորիմաստ ասացվածք է. «Անձին ապտակելն ավելի լավ է, քան նրան անտեսելը»: Չի կարելի նման երեխաներին դասարանի կողմից մերժված համարել: Միշտ էլ հնարավոր է հիմք ընդունել նրա մեկ այլ արժանիք, հմտություն կամ բարոյական նորմ:

Շատ երեխաներ այսօր ներամփոփ են: Նրանք ստեղծում են իրենց միկրոաշխարհը, քանի որ ծնողների զբաղվածության պատճառով ընտանիքներում բավարար ուշադրության չեն արժանանում: Այլ կերպ՝ ընտանիքները նրանց համար վերածվում են հուզական սառնարանների:Այդ պայմաններում երեխաներին ջերմությամբ պարուրելու բացը լրացնելու պարտականությունը ստանձնում է դասվարը: Մյուս առանձնահատկությունն այն է, որ այսօրվա երեխաները սիրում են արագ զարգացող և փոփոխվող իրադարձություններ: Արագ փոփոխվող աշխարհը և տեղեկատվության շեշտակի աճը հանգեցնում է այն իրավիճակին, որ դասագրքերը երեխաների համար դառնում են ձանձրալի: Այստեղ ևս կարևորվում է դասվարի դերը, քանի որ հենց նա է դասագիրք-աշակերտ հարաբերության միջնորդը:Դասագրքի յուրաքանչյուր նյութի դաստիարակչական կողմի ապահովումը պետք է իրականացվի նոր և ուշագրավ մեթոդներով ու հնարներով, որպեսզի նվազի արտաքին միջավայրի վատ ազդակների ներգործության ուժը: Դասապրոցեսում երեխան պիտի դաստիարակվի անընդհատ: Ասվածը հիմնավորենք՝ օրինակ բերելով դասավանդման փորձից :

Գաղտնիք չէ, որ դասագրքերում երբեմն հանդիպում ենք այնպիսի նյութերի, որոնց դաստիարակչական ներուժը գրեթե բացակայում է: Այստեղ դասվարը պետք է կիրառի իր մանկավարժական վարպետությունը և պատասխանատվություն կրի այդ բացը լրացնելու առումով: Նման դեպքերում դասանյութի վերլուծությունից հետո հետագա քերականական աշխատանքը կառուցում ենք հենց այդ հիմքով: Օրինակ՝ երեխաները գրատախտակին գրում են բնագրից ընտրված ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ և գրում բառատետրերում: Այդ աշխատանքի համար առաջադրում ենք դաստիարակչական պահանջներ: Աշակերտների կազմած նախադասությունների բովանդակության մեջ պետք է արտացոլվեն նրանց մարդասիրությունը, կամեցողությունը, բարությունը և այլն: Նմանատիպ քերականական աշխատանքները երեխային դրդում են հանդես գալ որպես դրական հերոս: Երբեմն էլ T-աձև աղյուսակի միջոցով աշակերտները համեմատության մեջ են մտնում հերոսի հետ:

ժամանակակից երեխայի մյուս առանձնահատկությունն այն է, որ արտաքին աշխարհը շատ արագ է բացվում նրա առջև: Եթե նախկինում երեխաներն դանդաղ ու աստիճանաբար

էին ճանաչում աշխարհը, ապա այսօր ՏՀՏ-ների զարգացման արդյունքում նրանց զգայական աշխարհը և տեղեկատվական գիտելիքները չեն համապատասխանում իրենց տարիքին: Այստեղ էլ բախվում ենք երեխայի վաղ
զարգացման իրողությանը:

Մատաղ սերնդին ըստ արժանվույն դաստիարակելու գործում անչափ կարևորվում է արտադասարանական միջոցառումները, որոնց կազմակերպման դրդապատճառները ևս պայմանավորված են ուսումնական նպատակներով: Յուրաքանչյուր միջոցառում կազմակերպելիս նախ նախագծում ենք վերջնարդյունքը. ի՞նչ ասելիք ունի այն և ի՞նչ կտա աշակերտին: Իսկ միջոցառումից հետո բացահայտում ենք մի շատ կարևոր հանգամանք. ինչ սովորեցրեց և ինչ որակներ դաստիարակեց տվյալ միջոցառումը: Նույն հարթակի վրա են ուսուցման բոլոր բաղադրիչները՝ թե՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, թե՝ արժեքային համակարգը: Երեխան ձեռք է բերում թեմայի բովանդակությանը վերաբերող գիտելիքներ, հաղորդակցվում, համագործակցում է ընկերների հետ, հարստացնում է աշխարհաճանաչողական գիտելիքները, մտածում, խոսում է գրագետ և այլն:

Նման աշխատանքները նպաստում են նաև աշակերտների կարողությունների զարգացմանը: Դրանք թև ու թռիչք են տալիս նրանց երևակայությանը հատկապես այն ժամանակ, երբ ուսուցիչն ընդունում է նաև իրենց առաջարկությունները: Իսկ աշակերտները երբեմն առաջարկում են այնպիսի լուծումներ, որոնք խոսում են ժամանակակից երեխայի վառ անհատականության, անմիջականության, համարձակության մասին:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

Դեռևս առաջին դասարանից ուսումնասիրվող նյութերում մեծ տեղ են գրավում խրատական առածներն ու ասացվածքները, որոնք արժեքային դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն: Վերջիններս երեխաների մեջ սերմանում են սեր, հոգատարություն:

Բարության և մարդասիրության դասեր են տալիս աստվածաշնչյան պատմությունները, որոնցից մի քանիսը ընդգրկված են կրտսեր դպրոցի «Մայրենիի» դասագրքում:

«Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է»:

«Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ»:

Ահա ինչն է ամենակարևորը մարդու համար:

Անգնահատելի է նաև առակների դերը անհատի դաստիարակության ու ձևավորման, չարն ու բարին ընկալելու գործում:

Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր՝ փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով: Այս դեպքում աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները, հատկանիշները փորձում են կապել, համադրել և համեմատել

կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը այդ ամենի վերաբերյալ, հարցեր տալ:

«Չորս խնձոր» ուսումնական նյութի մատչելի և հասկանալի մատուցմանը և այն արժեհամակարգի ձևավորմանն ուղղելուն մեծապես նպաստում են աշխատանքն արժևորելու, կարևորելու և գնահատելու, երեխաների մեջ բարություն սերմանող հետևյալ ասացվածքները. «Մի՛ գովիր մարդու տեսքը, այլ գովի՛ր մարդու խելքը, իմաստությունը, գործը», «Ամեն գործի վերջն է գովելի»:Երեխաների մեջ աշխատանքի նկատմամբ սեր և դրական վերաբերմունք է սերմանում նաև «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» ասացվածքը:

Ստեղծագործական, գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- խորհեն ընթերցածի շուրջ
- գնահատեն նրանց արարքները
- իմաստավորեն նրանց խնդիրները
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Յուրաքանչյուր հայի համար արժեհամակարգի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ընտանիքն է: Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի վրա ձևավորվում է քաղաքակիրթ հասարակությունը:

Ընտանիքի և ծնողական սիրո մասին դասերը պետք է յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, որպեսզի երեխան հասկանա, որ ընտանիքը սկսվում է հենց իրենից, ծնողի նկատմամբ իր վերաբերմունքից. չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ պետության զարգացումը դատել են ըստ ընտանիքի զարգացման աստիճանի և ընտանիքի հանդեպ պետության վերաբերմունքի:

Յուրաքանչյուր դաս իր մեջ ներառում է արժեհամակարգի տարբեր դրսևորումներ, ուստի իմ պարտքն եմ համարում գտնել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով

կարողանամ վեր հանել թեմայում բարոյական նորմը, այն քննարկել, ձևավորել այնպես, որ երեխայի մեջ դառնա հիմնարար արժեք:

Սեփական փորձառության ներկայացում

Սովորողների մեջ բարոյական արժեքներ սերմանելու և պահպանելու համար մշակվել են որոշ մեթոդներ և ռազմավարություններ.

1. դրամատիզացում

2. պատմություն

3. անձնական օրինակներ

4. դերախաղեր

5. խմբային աշխատանք

6. հարցադրումներ

Չորրորդ դասարանում, որտեղ սովորում է քսանվեց երեխա, դասերը արդյունավետ և նպատակային դարձնելու համար հաճախ եմ օգտագործում «Մտագրոհ» մեթոդը: Հարց ու պատասխանի միջոցով ամբողջությամբ վեր են հանվում ամենակարևոր մտքերը, գաղափարները:

«Հրաշք վրձինը» դասը վարելիս իմ առջև խնդիր էի դրել աշակերտների հետ քննարկել օգտակար լինելու պատրաստակամությունն ու բարությունը որպես հիմնարար արժեք, կարևորել վերջիններիս նշանակությունը և զարգացնել այն սիրո ու ջերմության մեջ պահելու կարողունակությունը:

Խթանման փուլը սկսեցի հանելուկով: Ցուցադրեցի վրձինները և հարցրեցի երեխաներին, թե ինչ կցանկանան նկարել, ինչ հայտնի նկարիչների անուններ և ինչ կերպարվեստի ժանրեր գիտեն(ծովանկարչություն, մանրանկարչություն, նատյուրմորտ, բնանկար, ինքնանկար, դիմանկար):

Իմաստի ընկալման փուլում՝

- Բնագիրը կարդացին շարունակելով,
- Մանրամասն վերարտադրելով,

- Բառային աշխատանք կատարելով. գրատախտակին գրեցին վրձին, ավտոմեքենա, Նոր տարի, Ձմեռ պապ, օդանցք, զննել, զարդարել, պարգևել, կենդանացնել բառերը:
- Հարցեր տվեցի բնագրի շուրջ.
  - Ո՞ր տոնի կապակցությամբ էր Բակուրը նվերներ ստացել և ու՞մ կողմից:
  - Ի՞նչ մասնակցություն ուներ նրա հորեղբայրը:
  - Ի՞նչ նվերներ էր ստացել Բակուրը:
  - Ո՞վ էր վրձնին կախարդական հատկություն տվել:
  - Աշխատեցին բնագրի շուրջ՝ գտան հոգնակի թվով գոյականներ և դարձրեցին եզակի թիվ:
  - Կազմեցին պատմողական և հարցական նախադասություններ:

Ֆիզկուլտ դադար

  - Մեկնաբանեցի և բացատրեցի ունկ (կանթ, բռնակ), բուն և բույն բառերը:
  - Հարցեր տվեցի նոր նյութի վերաբերյալ.
- Վրձնի կախարդանքը քանի՞ ժամ կարող էր գործել:
- Բակուրի կատարած առաջին հրաշքը ո՞րն էր:
- Տարվա ո՞ր եղանակն էր:
- Է՞լ ինչ հրաշքներ գործեց նա:

Կշռադատման փուլում արժեքային համակարգը զարգացնելու համար գործիք էի ընտրել **«Մտագրոհ»** մեթոդը: Բակուրին նկարագրեցին որպես բարի, ուշադիր, բնասեր, հոգատար, սրտացավ, կարեկցող անձնավորություն:

Վերջնարդյունքում երեխաները սովորեցին՝

- Կատարել բարի գործեր, պատրաստակամ եղան օգնելու, կարեկցելու, աջակցելու մարդկանց,
- Սկսեցին սիրել, հոգ տանել բնության և կենդանիների մասին:

Տնային աշխատանք հանձնարարեցի Ա. Պարսամյանի Հրաշք վրձինը սահուն ընթերցել, ներկայացնել Հիսուսի հրաշքներից մեկը:

Դասի օրվա պլան

Առարկա- Մայրենի

Հեղինակներ- Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան

Դասարան- 4-րդ

Դասի թեմա- «Լավ ընկերը 1» (ըստ Աստվածաշնչի)

Անհրաժեշտ նյութեր- դասագիրք, բառարան, պաստառներ, Աստվածաշունչ, համակարգիչ, պրոյեկտոր

Ուսուցման մեթոդներ- զրույց-քննարկում, մտագրոհ,քառյակ

Դասի նպատակը-

Ա մակարդակ- Հասկանա թեմայի բովանդակությունը:Կարողանա ընթերցել մեկ հատված, տարբերել և կիրառել ածական-գոյական կառուցվածքով բառակապակցությունները:

Բ մակարդակ- Կարողանա սահուն,գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը,լսել դիմացինի խոսքը,արձագանքել, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկատվություն հաղորդել:

Գ մակարդակ- Կարողանա լուռ ընթերցել՝ կենտրոնանալով իմաստով անծանոթ բառերի վրա և բառարաններից ինքուրույն գտնել դրանց բացատրությունները: Կարողանա գնահատել գործող անձանց վարքագծի դրդապատճառներն ու ապրումակցել հերոսներին:

Վերջնարդյունք- Արդյունքում սովորողը պետք է կարողանա արտահայտել,հիմնավորել սեփական տեսակետը և պահպանի ծրագրային նյութերում և իր ակտիվ բառապաշարում տեղ գտած բառերի ուղղագրությունը:

Նոր բառեր-ապառաժ, դարանակալել, քսակ, ամայի,առկայծել,օտարական, կիզիչ,ոլորապտույտ

Դասի ընթացք

Խթանման փուլ- Մտագրոհ մեթոդի միջոցով բացահայտել աշակերտների մտքում «ընկեր» բառի առաջացրած զուգորդումները:

Լեզվական նյութի ամրապնդում-Աշակերտներին տրվում է մեկ գոյական և հանձնարարվում է գրել այդ առարկային բնորոշ երկու հատկանիշ,երեք գործողություն և նշված գործողությունների հատկանիշ ցույց տվող երկու բառ: Օրինակ՝

Ընկեր

խելոք,բարի

խաղալ,գրկել,կարոտել

բարձրաձայն,ամուր

Ֆիզկուլտ դադար

Իմաստի ընկալման փուլ - Պատմության ընթերցում՝ կանխագուշակության աղյուսակի կիրառմամբ (4 մասով):

Առաջին հատված (ավարտվում է Մարդը միայնակ էր ճամփորդում և քսակում բավականին շատ փող ուներ նախադասությամբ): Գտնել ապառաժ,դարանակալել, ոլորապտույտ,ամայի և քսակ բառերի իմաստները:

Երկրորդ հատված (ավարտվում է Նա նայեց ճանապարհին ընկած վիրավորին ու նկատեց արյունը նախադասությամբ): Բացատրել արնաքամ և անմարդաբնակ բառերի իմաստները:

Երրորդ հատված (ավարտվում է Անցորդը շտապում էր նախադասությամբ): Ամրապնդել շքեղ բառի իմաստը և հոմանիշները:

Չորրորդ հատված: Բնագրի ամբողջական ընթերցում:

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

- Համեմատեն և գնահատեն անցորդների վարքագիծը:
- Ներկայացնեն իրենց հնարավոր վարքագիծը նման իրավիճակում:

Գնահատում -Գնահատումը կլինի

Գերազանց- Եթե աշակերտը լուռ ընթերցել է՝ կենտրոնանալով իմաստով անծանոթ բառերի վրա, և բառարաններից ինքնուրույն գտել է այդ բառերի բացատրությունը: Վերարտադրել է

տեքստի բովանդակությունը՝օգտագործելով ակտիվ բառապաշարը: Տարբերել է հնչմամբ և գրությամբ տարբեր բառերի ուղղագրությունը:

Լավ- Եթե սահուն,գրական շեշտի և առոգանության պահպանումով ընթերցել է տեքստը(առանց տեմպի հաշվառման): Հասկացել է կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:

Բավարար- Եթե կարդացել է տեքստից մեկ հատված և հասկացել է կարդացած հատվածի բովանդակությունը:Արտագրել է մի քանի նախադասություն,սակայն թույլ է տվել ուղղագրական սխալներ:

Ամփոփում: Մուլտֆիլմի դիտում

https://youtu.be/yavdXvosw7M

Տնային աշխատանք - Կարդալ «Լավ ընկերը 1 », սովորել նոր բառերը: «Մանուկների Աստվածաշնչից» ընթերցել Հիսուսի մեկ այլ պատմություն:

Եզրակացություն

Արժեքային համակարգի ձևավորման գործընթացը պետք է լինի նպատակային և կազմակերպված, երկար և շարունակական: Ուսուցման ճիշտ, համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում է սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորմանը:

Դաստիարակող ուսուցման սկզբունքին հավատարիմ դասվարը դպրոցում դառնում է այն նախանձախնդիր մշակը, որն առավելապես գնահատում է սովորողի ուսումնական աշխատանքը և խրախուսում նրա անգամ փոքրիկ ձեռքբերումը: Նա իր վարքագծով օրինակ է ծառայում և դաստիարակում իր սանին՝ նույնիսկ առանց այդ ուղղությամբ հատուկ միջոցներ ձեռնարկելու և նպատակադրման: Այդ կերպ ուսուցիչը դառնում է հեղինակություն իր աշակերտի համար. նրա խոսքը, շարժուձևը , նույնիսկ դիմախաղը կրտսեր դպրոցականի համար իրական մարդկային իդեալի են վերածվում: Ուստի հենց այս տարիքում է, որ երեխայի զարգացման լարն ուսուցչի ձեռքում է, և վերջինս էլ, համաձայն իր հմտության, հանգիստ կարող է իր «երաժշտական սիմֆոնիան» ստեղծել այդ լարերի վրա:

Մայրենիի դասընթացը ներառում է գրական հարուստ ժառանգության, այդ թվում՝ բանահյուսական ստեղծագործություններ, բազմաթիվ նմուշներ, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղվում է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունք, համատեղ աշխատելու՝ համագործակցելու կարողություններ ձևավորելու մշտատև գործին: Դասի ընթացքում որքան շատ են արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները, այնքան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի, և,հետագայում, մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ:

Երկրի ապագա քաղաքացիների անձնային որոշ որակներ ձևավորվում են հենց դպրոցում: Այդ պատճառով էլ պետք է փորձենք լինել առավել համբերատար, հանդուրժող, լավատես և հանդես չգալ միայն ժամանակակից երեխայի առանձնահատկությունները քննադատողի դերում: Գուցե մեր անսահման սիրով ու նվիրումով, հոգու ջերմությամբ, պատասխանատվության գիտակցումով, մարդասիրությամբ, հոգատարությամբ և էթիկայով փորձենք գտնել երեխայի հոգու գաղտնարանները տանող բանալին: Եթե ծովում ենք ու չենք

կարող փոխել քամու ուղղությունը, ուրեմն՝ պետք է մտածել ելքի մասին. օրինակ՝ պատրաստել առագաստ և ապացուցել, որ ամեն ինչ կորած չէ: Մեր ստեղծած առագաստով պաշտպանենք մեր երեխաներին՝ բոլոր տեսակի քամիներից:

Գրականության ցանկ

1.Письмо о педагогической этике. "Народное образование", 1970, № 11

2. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

3. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
4. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
5. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:
6. Նախաշավիղ 5.2014թ.:
7. Նախաշավիղ 5-6.2003թ.:
8. Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին,Այռեքս, Երևան, 2004:
9. ՍուխոմլինսկիՎ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.
10. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978